1895 ՅՈՒՆՎԱՐ 1 (13) ԿԻՐԱԿԻ

№ 1 ՏԱՄՆԵՒՀՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 1

1895 ՅՈՒՆՎԱՐ 1 (13) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է յոթեշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang.“

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փ. ոց, № 22, տուն Խանղալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր տարի։
Անգլիական մամուլ և հայկական խնդիր։
Անգլօ-տաճկական յարաբերութիւնները և հայկական խնդիրը։
Ազարեան պատրիարք և հայկական խնդիր։
«Նեդելիա» շաբաթաթերթի № 50-ի յօդուածը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհ. Կաթողիկոսի և Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի փոխադարձ այցելութիւնները։ Վեհափառի այցելութիւնը ազնուականների պարագլխին։ Նիդերլանդիայի հիւպատոսի ներկայանալը Վեհափառին։ Վանքի եկեղեցու վերաշինութեան մասնաժողովի ներկայանալը Նորին Վեհափառութեան։ Փոխ-այցելութիւններ։ Տ. Ս. Իզմիրեանի նուէրը Վեհափառին։ Հեռագիր Պետերբուրգից։ Բերլինի դաշնադրութեան 62-րդ յօդուածը։ Վաշինգտոնից։ Պետերբուրգից։ Փուադ փաշայի պաշտօնը։ Նամակ Բերլինից։ Կարսի երկաթուղին։ Բամբակի մաքսի բարձրացումն։ Բելգիայի փոխ-հիւպատոսի մահը։ Նամակ Բազելից։ Հայկական ներկայացումը։ Ներկայ թուի օրացոյց։
ԳԻՏՈՒԹԻՒՆ և ԱՐՈՒԵՍՏ
ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Վանից։
ՖԵԼԻԵՏՕՆ—Մշեցու Նոր-տարու առթիւ։
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ԳՈՒՅՑԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ՏԱՐԻ

Ներքին կեանքի բազմաթիւ վրշտերը չքանում են և մի առանձին ուրախութեան զգացմունք տիրում է հայի սրտին այս նոր տարեգլխին, երբ նա մտածում է իրեն տոգորող նոր յոյսերի վրայ։

Ապագայի երջանկ թիւնը և յոյսն աւելի են գնահատում այն համայնքները, որոնց յոյսերը ոչ թէ մի, այլ մի քանի անգամ են ըեկբեկուած։

Այդ տեսակ համայնքներից է հայ ազգի այն միլիոնաւոր մասը, որ դարերից ի վեր հառաչում է քրդի և թուրքի ճնշող լծի տակ։

Մեր ազգային կեանքի տխուր և մառախլապատ մթնոլորտի միջից մի պայծառ աստղի պէս ձգում է մեր տաճկա-հայերի վրայ իր շառաւիղը այն ապագան, որին սրտատրոփ սպասում է նրանցից ամեն մինը։ Սակայն այդ ուրախալի հանգամանքը չէ խանգարում, այլ մինչև անգամ պրա յաջողութիւնը պահանջում է աւելի ուշադրութեամբ նայել մեր ներքին ազգային կեանքի այժմեան վիճակի վրայ, ներքին գործնական կեանքի, որ մի առանձին մխիթարական երևոյթ չէ արտադրում։

Մինչև այժմ իւրաքանչիւրը միւսին էր մեղադրում հասարակական խնդիրների անյաջող ընթացք ստանալուն համար և իւրաքանչիւրը իրեն էր վերագրում որ և է մի յաջողութիւն. բայց այդ բոլորի մէջ չէր արտայայտվում երբէք այն համերաշխ լծակցութիւնը, որ ամենամեծ զրաւականն է կեանքի յառաջադիմութեան։

Լուսանում է նոր տարին և մեր առաջ դրուած են անթիւ անհամար հասարակական խնդիրներ, որոնցից շատերը ոչ միայն չեն լուծուած, այլ նոյն իսկ կիսամեռ դրութեան մէջ են գտնվում ընդհանուր անտարբերութեան շնորհիւ։

Հայ ուսուցչէն ու գրագէտը կարծես աչքափակ չեն տեսնում իրենց չորս կողմը շրջապատող կեանքը, բնութիւնը, ժողովուրդը, նրա հոգսն ու կարիքը. փոխանակ այդ կեանքն ուսումնասիրելու և այդ ուսումնասիրութիւնը գրականութեան մէջ մտցնելու, որոշ տեղերի կուսակցական — սիրագործութիւնների պատմութիւններով են զբաղեցնում հայ մամուլին և ընթերցողին... Եւ այս կարծէք թէ ոչ ոքի ցաւ չէ պատճառում։

Հայ հոգևորականութեան բազմաթիւ պաշտօնեայք չըմբռնելով ոչ ժամանակի լրջութիւնը, ոչ իրենց կոչման վեհութիւնը, փոխանակ սպեղանի դնելու ժողովրդի վէրքերին, փոխանակ Աստուծոյ տաճարի սեղանից լսեցնելու խղճի ձայնը, փոխանակ փափկացնելու բրտացած սրտերը, այս կամ այն կուսակցութեան նպատակների համար են առաքելութիւն անում։ Եւ այդ ոմն է ցաւ պատճառում։

Ամենայն ազգ պարծենում է իւր նոր սերնդով, այդ սերնդի վրայ է դնում իւր բոլոր յոյսը, այդ մատաղաշ ընձիւղներից է սպասում իւր փայլուն ապագան, ամենայն խնամքով ու քնքշութեամբ է վարվում այդ հայրական խնամքի կարօտ դասակարգին, իսկ մենք, իսկ մեր մէջ.—նոր սերունդը գործիք են շինում ամենաստոր նպատակների հասնելու համար։ Եւ սոսկումն է գալիս մարդու վրայ, երբ նայում էք ու տեսնում, որ այդպիսի հասարակական ցաւերի հեղինակները ամենափոքր խղճի խայթ անգամ չեն զգում ..

Բայց այս բոլորն արդեօք կ'ոչընչանա՞յ և դրան կը փոխարինէ՞ արդեօք բարին, շիտակութիւնը և ազնըւութիւնը.—այդ մենք չգիտենք, բայց կարող ենք յուսալ հիմնուելով այն փոքրիկ գիտակցական նշոյլի վրայ, որ նշմարվում է սակաւաթիւ շրջաններում։ Սակայն միայն այդպիսի չնչին յոյսերով ապրելով՝ հասարակական կեանքի ընթացքին առանձին զարկ տալ անհնարին է, ուստի մենք այս Նոր տարուան առաջին օրը նկարագրելով ընդհանուր ներքին տխուր վիճակը, դիմում ենք այն բոլոր բարեխիղճ անձանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են հասարակական կեանքի առաջադիմութեան նպաստել, որ նոքա տոգորուին ջերմ սիրով դէպի միմեանց որ նրանք միահամուռ այժով և գործակցութեամբ Նոր տարուց սկսեն նոր կեանք և նոր գործունէութիւն, որի միակ նպատակը պիտի լինի հասարակական շահը։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ և ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Times» 27 dec.

«Times» լրագրի Փիլադելֆիայի (Ամերիկա) թղթակիցը հեռագրում է դեկտ. 26-ից.— «Միացեալ-Նահանգների «Marblehead» պատերազմական նաւին հրամայուած է ուղևորուիլ Եւրոպա։ Այդ նաւը այնքան երես է նստում ջրի վրայ, որ կարող է անարգել լողալ տաճկական ափերի մօտ և հարկաւոր եղած դէպքում օգնութեան հասնել դոքտոր Դրիւտին, նրա հայաստանում կատարելիք քննութիւնների միջոցին։ Սակայն այդ հրամանը տալուց յետոյ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը վերջնական մերժումն ստացաւ տաճկաց կառավարութիւնից, որ թոյլ չէ տալիս Դրիւտին քննութիւն կատարել։ Երևի կառավարութիւնն այժմ բոլորովին յետ կը կանգնի քննութիւն կատարելու դիտաւորութիւնից։»

«Daily News»—27 dec.

Հեռագիր Օդեսայից. — Սարիղամիշից հաղորդում են որ Մուշից և Բուլանըխից շարունակ գալիս են բազմաթիւ հայ փախստականներ, որոնք ուղևորվում են դէպի Էջմիածին։ Այդ բոլոր փախստականները, որոնք գտնվում են ամենասոսկալի դրութեան մէջ, հաստատում են Սասունի կոտորածների վերաբերեալ առաջուց ստացուած տեղեկութիւնները։ Այդ թշուառներից մէկը վէրքերով ծածկուած և հաշմոտուած գրաւոր կերպով ներկայացրաւ իր այն տանջանքների նը կարագիրը, որ նա կրել է «Սասունի արիւնահեղ մկրտութեան» ժամանակ։ Փախստականները նոյնպէս հաստատում են թէ իրենց ազգակիցներից շատերը հարկադրուած էին մահմեդականութիւն ընդունել, որպէսզի այդպիսով կարողանան ազատել իրենց կեանքը, սեպհականութիւնը, իրենց կանանց ու դստերց պատիւը։»

ՓԱՐԻԶՅԻ, դեկտեմբերի 26 ից.

«Այստեղ ապրող հայերը վճռեցին Ֆրանսիական արտաքին գործոց նախարար Գոնատային մի գրութիւն ուղարկել, որի մէջ պահանջվում է թէ Եւրոպական քննիչ յանձնաժողովը Հայաստանում պիտի պնդէ որ տաճկական կառավարութիւնը ամենայն մի վտանգից ապահովեցնէ բոլոր վկաներին, ինչ տեսակ ցուցմունք էլ նրանք անելու լինին։»

ՎԱՇԻՆԳՏՈՆԻՑ, դեկտ. 26 ից. (Բէյտէրի գործ).

Արտաքին գործոց պետական քարտուղարը յայտնեց թէ Սուլթանը վերջնականապէս մերժեց երաշխաւոր լինել դոքտոր Դրիւտի ապահութեան Հայաստանում կատարելիք քննութեան ժամանակ այն տեղերում, ուր կատարուել են տաճկական անգթութիւններ. ուստի այդ մերժումը վերջ է դնում Միացեալ Նահանգների քննութեան մասնակցելու հարցին։

ԱՆԳԼՕ-ՏԱՃԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

(Թղթակցութիւն Լօնդօնից, «Բիրժէվ. Վեդոմոստիի»)

Անգլիայի և Տաճկաստանի յարաբերութիւնները հետզհետէ աւելի և աւելի սուր կերպարանք են ստանում։ Լօնդօնի ամբողջ մամուլն այժմ զինուել է Բ. Դրան դէմ. ձայներ են լսվում, որոնք պահանջում են խաչակրաց արշաւանք սկսել Տաճկաստանի դէմ։ Մի քանիսը պահանջում են, որ նա բոլորովին բնաջինջ լինի Եւրոպայի երեսից։ Ընդհանուր ցասման արտայայտութեանը միացել է նոյն իսկ ինքն Գլադստընը, որ Նորերս հայկական պատգամաւորութիւնն ընդունած ժամանակ խիստ դատավճիռ կարդաց հայաստանում կատարուած պատահարների առիթով։

Դեռ երկու երեք շաբաթ սրանից առաջ հաղիւ թէ մէկը կարողանար ասել, որ Անգլիայի և Տաճկաստանի յարաբերութիւններն այդքան լուրջ կերպարանք կընտանան։ Այն ժամանակ գործը դեռ շատ բարդ չէր երևում։ Էրզրումի բրիտանական հիւպատոսը հաղորդեց Կ. Պոլսի բրիտանական դեսպանին այն ան գթութիւնների մասին, որին ենթարկուած է Սասունի հայ ժողովուրդը։

Դրանից յետոյ դեսպանը դիմեց Բ. Դրան ու խնդրեց բացատրել այդ գործը և ուրիշ ոչինչ։ Ըստ երևութին, ամեն ինչ պարզ էր։ Բայց ահա Բ. Դուռը փոխանակ գործն իսկապէս բացատրելու, պատասխանեց թէ Հայաստանում ան կարգութիւններն առաջացրել է ոչ այլ ոք թէ ոչ անգլիական փոխ-հիւպատոսը, որ այդ միջոցին ճանապարհորդում էր Հայաստանում. Այդ հանգամանքը սաստիկ վրդովեց անգլիական դեսպանին, որ և հաղորդեց տաճկական կառավարութեան, թէ ինքն այժմ ստիպուած է Հայաստան ուղարկել Կ. Պոլսի զինուորական կցորդ գործակալին, յանձնելով նրան տեղն ու տեղը համոզուել, թէ որքան ուղիղ են Բ. Դրան փոխ հիւպատոսի վերայ բարձած մեղադրութիւնները։ Բ. Դուռն այդ իմանալով ոտ ու ձեռ ընկաւ։ Նրան առ հասարակ հաճելի չէ, երբ կողմնակի մի աչք որևէ կերպով նայում է նրա ներքին գործերին, մանաւանդ Հայաստանին, ուր տաճկական տիրապետութիւնը չափազանց շատ բարեմասնութիւններից զուրկ է։ Բ. Դուռը, որպէս զի իր նպատակին հասնէ, իւր խօսելու եղանակը, տոնը մեղմացրաւ և դիմեց անգլիական դեսպանին արդէն ինդրելով, որ նա յետ կենայ իր ներկայացուցչին Հայաստան ղրկելու մտադրութիւնից, խոստանալով միևնոյն ժամանակ նշանակել տաճկական քննիչ յանձնաժողով, որի անդամները, իւր ասելով, երդմամբ կը պարտաւորուեն անաչառութեամբ կատարել իրենց վրայ դրուած պարտաւորութիւնը։ Դեսպանը համաձայնուեց և ըստ երևութին գործը կարգի էր ընկնում։ Բայց ահա Բ. Դուռը կրկին խորամանկութեան դիմեց։ Յանձնաժողով կազմելով, նա տաճկական լրագրներին հաղորդեց, թէ այդ յանձնաժողովը պիտի զբաղուի քննութեամբ այն անկարգութիւնների, որ կատարել են հայերը... Այդ հանգամանքը հարկադրեց բրիտանական դեսպանին կասկածով վերաբերուել տաճկական կառավարութեան անկեղծութեանը. ուստի նա վճռականապէս յայտնեց, որ ամենևին չէ կարող վստահանալ միայն յանձնաժողովին և ստիպուած է պատահարների տեղն ուղարկել անգլիական հիւպատոսին։ Բացի դրանից նա ակնարկեց, թէ իւր (անգլիական) կառավարութիւնը մտադիր է հրաւիրել նաև մի քանի օտար պետութեանց ներկայացուցիչներին՝ մասնակցելու յանձնաժողովի աշխատանքներին։ Այդ ժամանակ Բ. Դուռը ձեռ ոտ ընկաւ։ Ինչ կասի Եւրոպան այդպիսի մի կողմնակի միջամտութեան մասին, իւր ներքին գործերի մէջ։

Եթէ անգլիական կառավարութիւնը վճռականապէս պնդում է որ անպատճառ կողմնակի պետութիւններ միջամտեն—ասում էր Բ. Դուռը—ուրեմն թող այդ դէպքում միջնորդը լինի Միացեալ Նահանգների ներկայացուցիչը։ Վերջիններս, յայտնի չէ ինչու, վաղուց սիրելի են Բ. Դրան։ Երբ երեք տարի սրանից առաջ տաճիկները Մերսիվանում նոյն տեսակ արիւնահեղ կոտորած արին, ինչպէս վերջերս Սասունում, և երբ բան տարկուեցին այդ կոտորածի ժամանակ գերմանական քահանայ Հոֆման և մի անգլիական պրոֆեսօր, այդ ժամանակ ևս միջնորդ եղաւ Միացեալ-Նահանգների ներկայացուցիչը։ Հիւսիսային Ամերիկայի հետ վարած բանակցութիւնները դրական հետեւանքներ ունեցան... Բ. Դուռը ստիպուած էր համաձայնուել որ իր ներքին գործերին միջամտեն Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան և միևնոյն ժամանակն ինքը կազմեց մի յանձնաժողով զանազան կասկածելի անձինքներից, որոնք առաջուց խիստ հրահանգներ ստացան իրենց ազազայ գործունէութեան եղանակի մասին։ Զնայելով նոյն իսկ դրան, յանձնաժողովը շարունակ մնում էր Էրզրումում, ուր գտնվում է և այժմ ու մտադիր է գնալ Սասուն միայն տասն օրից յետոյ։ Այդ հանգամանքը նոյնպէս Անգլիայում սաստիկ ցասումն գրգռեց։ Ինչու յանձնաժողովը այսքան երկար ժամանակ դանդաղում է։ Բացի դրանից Անգլիայի հասարակական կարծիքը շատ դժգոհ մնաց յանձնաժողովի կազմակերպութեամբ, որի անդամներից մէկին մեղադրում են զանազան տգեղ վարմունքների մէջ։

Այդ բոլորի վրայ աւելացաւ և այն, որ բացարձակ ցոյցերով շքանշան տրուեց Զաքի-փաշային, որ Սասունի անկարգութեանց գլխաւոր յանցաւորն է։

Բ. Դուռը, տեսնելով որ գործերի դրութիւնը հետզհետէ աւելի և աւելի լրջանում է, սկսեց կրկին իւր հին նենգամտութեան դիմել, փոխանակ սպասելու յանձնաժողովի քննութեանց հետեւանքներին, նա լիազօրութիւն տուաւ իւր արտակարգ դեսպան Փուադ-փաշային Պետերբուրգում իւր շահերին պաշտպան հանդիսանալ և իբրև մուսեռիկ քարոզել թէ ինքն արդարութեամբ պիտի գործէ հայերի վերաբերութեամբ։

Բ. Դռան յանձնարարութեամբ, Փուադ-փաշան պիտի համոզէր ռուսաց կառավարութեան և օտար պետութեանց Պետերբուրգում գտնուող ներկայացուցիչներին՝ թէ Բ. Դուռը իւր կողմից ամեն հնար եղածը կ'անէ օտար պետութեանց յանձնաժողովին պաշտպանելու համար և նոյնպէս խիստ պատժի կենթարկէ տաճկական այն աստիճանաւորներին, որոնք յանցաւոր են հայերի դէմ եղած բռնաբարութիւնների գործում։

Այստեղ նկատում են որ տաճկական կառավարութեան այդ քայլի նենգամիտ նպատակն է Անգլիային հեռացնել Սասունի անկարգութեանց գործի քննութեան մասնակցելուց և ապա, քիչ յետոյ նոյնպէս վարուել և Ռուսաստանի ներկայացուցչի հետ։ Այդ հանգամանքն ընդհանուր զայրոյթ է առաջացրել։

Գլադստընը իւր այսօրուան ճառով հրապարակ է եկել միայն իբրև բոլոր Անգղիայի հասարակական կարծիքի արտայայտող։

ԱԶՈՐԵԱՆ ՊՈՏՐԻԱՐՔ և ՀՈՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(«Kölnische Zeitung», 22 Dec.)

Մի քանի ժամանակ առաջ եւրոպական թերթերից իմացել էինք, թէ Հռոմում հրատարակուող «Osservatore Romano» լրագիրն ուրանում է Հայաստանում կատարուած գազանութիւններն և պնդում, թէ չարիք գործողները թիւրքերը չեն, այլ օտարամուտ դրդիչների թելադրութեամբ գրգռուած հայերը։

Թէև այդ լրագրի յօդուածն անստորագիր է, ասում է գերմանական լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, բայց և այնպէս Կ. Պոլսում ամեն մարդ համոզուած է, որ յօդուածի հեղինակն ոչ այլ ոք է, բայց եթէ «Կիլիկիոյ պատրիարք նորին երանութիւն ամենապատիւ հայր Ազարեանը»։

Եւրոպական մամուլի մեծ մասն այնքան անտեղեակ է թիւրքիոյ հանգամանքներին, որ անշուշտ հաւատ կ'ընծայէ այդ «հոգևոր պետի» խօսքերին, կարծելով թէ նա որպէս հայ մարդ բաւական լաւ կ'իմանայ իւր ազգակիցների արդի վիճակը, որով զբաղուած է այժմ ամբողջ Եւրոպան։

Կաթոլիկ հայերի թիւը, Զիլբերնագլի վկայութեամբ *) հասնում է 40,000։ Եւ թէ ենթադրենք անգամ, թէ նրա գրքի լոյս տեսնելու օրից ի վեր, այսինքն՝ քսանևինն տարիների ընթացքում այդ թիւը կրկնապատկուել է (որ սակայն հաւանական չէ),—դարձեալ դա շատ չնչին կը լինի $2^1/_2$ միլիոն հայերի համեմատութեամբ։ Մինչդեռ Կ. Պոլսի լուսաւորչական հայերի պատրիարքը մօտ 300,000 հաւատացեալներ ունի իւր հովուական դաւազանի տակ և ի պահանջել հարկին այնպիսի իշխանութիւն է բանեցնում, որ նոյն իսկ Բ. Դուռն ստիպուած է հաշիւ տեսնել նրա հետ,—Հ. Ազարեանին հետևող կաթոլիկ հայերի թիւն այստեղ հազիւ թէ 20 25000-ից աւելի լինի։

Եւ որովհետև դրանք ըստ մեծի մասին փոքր ի շատէ արտօնեալ դիրք վայելող աստիճանաւորներ, վաճառականներ և այլն լինելով միւս հայերի չափ չեն տանջուած թուրքերի բռնութիւնից, ուստի հայկական խնդիրը քննելիս հարկաւ նրանք ոչ թէ չեն ձգնակցում ճրնշուածներին, այլ դեռ պատրաստ են ամեն բան անել, որպէս զի դժգոհութեան առիթ չտան և հանդիստ հետամուտ լինին իրենց նիւթական շահերին։ Հայոց հայրենասիրութեան վրայ խօսելիս մի որոնէք այդ սէրը կաթոլիկ հայերի շրջանում։ Դրանց մեծ մասը երբէք տեսած էլ չէ հայաստանը։ Եւ արդեօք նոյն իսկ ամեն. Հ. Ազարեանը երբ և իցէ ոտք դրած է հայկական հողի վրայ—այդ էլ դեռ շատ կասկածելի է ինձ համար։ Նրա զերդաստանը բնակվում է Կ. Պոլսում շատ փարթամ վիճակի մէջ, և պատրիարքն իւր «երջանկութեան» մեծագոյն մասը պարտական է եղբայրների ճարպիկութեան. եղբայրներն էլ իրենց հերթին մեծ օգուտ ունին հոգևոր հօր բարձր դիրքից. ուստի փոխադարձ համերաշխութիւնը կատարեալ է։ Ազարեան եղբայրների մտերմութիւնն այնքան սերտ է, որ նրանց հարստանալու հանգամանքները քրքրելով կարելի է շատ բան հետևցնել և պատրիարքի բնաւորութեան մասին։ Լէկ եղբայրը բարձն հիրշի արժանաւոր ընկերն է և նրա արբանեակը թիւրքական երկաթուղիների շինութեան մաքուր գործում. այդ ընկերակցութիւնը դեռ այս օր էլ տևում է, թէև փոքր ինչ թուլացած կերպով։ Նոյն եղբայրը յայտնի է Կ. Պոլսի առևտրական աշխարհում իբրև շատ ճարպիկ միջնորդ, որ կարող է ամեն տեսակ բաներ գլուխ բերել։ Գալով երկրորդ եղբօրը, որ երկար ժամանակ նոր աշխարհում գտնուելու պատճառով ամերիկացի է կոչվում, նա անգլիական ձև է տուել իւր անուան և դարձել է «էդերիէն». բայց երբ որ նա ուզեց, որ թիւրքաց կառավարութիւնը ամերիկական փոխ-հիւպատոսի պաշտօնի մէջ հաստատէ նորան,—պատրիարք եղբօր միջամտութիւնն անգամ անօգուտ մնաց. կառավարութիւնը բացէ ի բաց մերժեց նրա խնդիրը։

Բ. Դուռը չէր մոռացել, որ պատերազմի ժամանակ ահագին գնով գնուած Մարտինիի և Ուինչեստրի հին և անպէտք հրացանները այդ իսկ պարոնի ձեռքից էին անցել։ Միևնոյն շրջանի մարդ է և նորին գերապատուութիւնը։ Բոլոր եղբայրներն էլ մի ոգու տէր են։ Բան չկայ, որի մէջ խառն չլիներ ամենապատիւ հօր ճարտար մատը։ Նորերս մի շատ նշանաւոր գիւանագէտ ասաց, թէ Կ. Պոլսում հաղիւ թէ մի առևտրական ձեռնարկութիւն գտնուի, որի մէջ մաս չունենար այդ բարձրաստիճան հոգևոր հայրը։

Անժխտելի ճշմարտութիւն է, որ

*) «Verfahrung der gegenwärtigen Bestand der Kirchen des Orients»—Արևելեան եկեղեցիների կազմակերպութիւնն և արդի վիճակը։

Կ. Պոլսի հայերը, - բացի Հարիւաւոր խմբակից, որ քննում է Բ. Դրռան առջև և օգուտ է սպասում նրանից, — ոչ միայն չեն սիրում ամենապատիւ Ազարեան պատրիարքին, այլ և ուղղակի իրենց դատին չարաչար վնասող դաւաճան են համարում։ Պնդում են մինչև անգամ, թէ նա նպաստում է ևս աւելի վատթարացնել Հայաստանի հայոց դառն վիճակը, եթէ ոչ անմիջական միջամտութեամբ ի վնաս այդ հայերի, գոնէ իւր անտարբերութեամբ, որ յառաջ է գալիս կարդինալի ատիճան ստանալու ջերմ ձգտումից։ Երբոր երկու տարի առաջ ամեն. Ազարեանը Հռոմ էր դնացել պապի յօբելեանին մասնակցելու, այնտեղ նա մի ուրոյն դեր խաղաց իւր փափագած կարդինալութեան ճանապարհը հարթելու համար։ Պապը երևի թէ լաւ ծանօթ չէր այստեղի հանգամանքներին, մանաւանդ թոյլ չէր տալ ամեն. Ազարեանին այնպէս շքեղ գոյներով պատկերացնել պատրիարքի դիրքը, որ ոչ մի կերպով չէր նման իսկութեան։ Այն ժամանակ ամեն. Ազարեանը բազմադիմի լրագրական գործունէութիւն ցոյց տուաւ, urbi et orbi հռչակելով, թէ ինչ փառաւոր ընդունելութիւն է գտել Հռոմում և թէ ինչ մեծախորհուրդ պաշտօն պիտի յանձնէ նրան սրբազան պապը եկեղեցիների միացման գործի մէջ։

Սակայն ամենապատիւ հայրը իւր հաշիւներն առանց Վեհ. Սուլթանի հաճութեան էր արել. Սուլթանը բնաւ չէ սիրում, որ իւր հպատակներից մէկը, այն էլ իրենից կախումն ունեցողը, շատ խօսէ և խօսել տայ իւր մասին։ Այս տեղի լրագրներին արգելուեցաւ բան գրել պատրիարքի վրայ, և նա վերադարձին անձամբ ստուգեց, որ բարձրագոյն շրջաններում շատ հաշտ աչքով չեն նայում իւր վրայ։ Այս անախորժ դրութիւնից դուրս գալու համար ճարպիկ պատրիարքը մինչև այս օրս աշխատեց Բ. Դռան կողմը բռնել այն ամենը դիպուածներում, երբ պէտք էր հրապարակ հանել հայկական խնդիրն և ջատագով կանգնել հայոց դատին։ Պատրիարքը հասաւ իւր նպատակին, իւր մասին եղած կասկածները փարատուեցան։ Բայց և այնպէս նա չկարողացաւ թոյլատրութիւն ստանալ սուլթանից Հռոմ գնալու արևելեան եկեղեցիների միացման նպատակով պապի գումարած ժողովին մասնակցելու համար։ Այն ինչ Ազարեան պատրիարքն այնքան վրդոված էր թէ Հռոմում մեծամեծ բաներ կ'անէ և գուցէ նոյն իսկ սուլթանից շատ կարևոր պատուէրներ կրստանայ, որ արդէն առաջուց տարածել էր, թէ անպատճառ պիտի ուղևորուի։ Սակայն կատարուեցաւ, ինչ որ ամեն մի հեռատես մարդ կարող էր գուշակել. կառավարութիւնը ոչ միայն թոյլ չտուաւ պատրիարքին Հռոմ գնալ, այլ և մի ազդու յանդիմանութիւն արաւ նրան, որից յետոյ մի պաշտօնական հեռագիր առաքուեցաւ ամենուրեք, թէ Հայր Ազարեանի Հռոմ գնալու մասին ոչ միայն խօսք չէ եղել, այլ լինել անգամ չէր կարող։

Ահա դա է այն մարդը, որին այժմ օգնական է կանչել Դուռը Հալածուած հայերի դէմ վիայելու համար։ Եթէ Եւրոպայում գէթ վեր 'ի վերոյ դիտենային, թէ ով է իսկապէս ամեն. Ազարեանը և չիարուէին նրա մեծահնչիւն տիտղոսից, այն ժամանակ ոչ միայն բանի տեղ չէին դնիլ նրա՝ Հռովմէական թերթում հրատարակած բացատրութեանը, այլ և կ'արհամարէին հեղինակին, որ թէև հայկական անուն է կրում, թէև իրեն հայ է անուանում, բայց այնքան մարդավարութիւն չունի, որ իւր հայրենակիցների անբախտութեան ծանր րոպէին գոնէ լռութիւն պահպանէ։ Եթէ ամեն. Ազարեանը գէթ մի անգամ խօսակցէր, ինչպէս որ ես եմ անում, մի կտոր հաց վաստակելու համար տուն և տեղ թողնելով հայաստանից Կ. Պոլիս եկած խեղճ մարդկանց հետ, որոնք ոչինչ չգիտեն «օտարամուտ դրդիչների» և այդ տեսակ նուրբ բաների մասին, և նրանց շրթունքից լսէր, թէ ինչ ողբալի դրութեան մէջ է նրանց հայրենիքը, — այն ժամանակ գուցէ փոքր ինչ ամօթ զգար և աւելի զգոյշ լինէր։

Փ. Վ.

«ՆԵԴԻԼԻՍ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹԻ № 50ի ՅՕԳՈՒԱԾԸ

«Լուրջ Անգղիան, որի աւանդութեանց մէջ ի վաղուց հետէ մտնում է ճնշուած ազգերի պաշպանութեան գաղափարը, համակուած է մի աղ կալից շարժմամբ տաճկական Հայաստանում տեղի ունեցած պատահարների առիթով։

Ինչպէս որ անում էր Բոլղարիայի ազատութեան համար եղած պատերազմից առաջ, նոյնպէս և այժմ անգղիական մամուլը կոչնակ է զարկում, միտինգներ են ժողովում, պետական հռետորները սպառնալից ճառեր են արտասանում, քահանաները եկեղեցիներում կարեկցութիւն են քարոզում։

Ինչպէս յայտնի է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով Բ. Դուռը պարտաւորուել էր անհրաժեշտ բարիքմներ մրցցնել Հայաստանում և հայերի դրութիւնն ապահովել քրդերից։ Միևնոյն ժամանակ տաճկական կառավարութիւնը պարտաւոր էր որոշ ժամանակի ընթացքում եւրոպական պետութեանց տեղեկութիւններ հաղորդել թէ ինչ ու ինչ միջոցներ են ձեռք առնուել այդ նպատակն իրագործելու համար և պետութիւնները պիտի հսկէին այդ միջոցների վրայ։ Բայց այդ յօդուածը, ուրիշ շատ յօդուածների նման մնացել է ձայն բարբառոյ յանապատի։

Տաճկաստանում հայ ազգաբնակութիւնը հասնում է մինչև 3 միլիոնի։ Այդ թուից մօտ 200.000 ապրում են Կ. Պոլսում։ Մինչև 1877—1878 թուի պատերազմը այդ երկիրը Էրզրումի վիլայէթն էր կազմում։ Պատերազմից յետոյ վիլայէթի մի մասն անցաւ Ռուսաստանի ձեռքը, իսկ միւս մասը Կարաւոլ և Մուրադ-չայի (Եփրատ) ջրաբաշխ և Վանի լճի նահանգը մտաւ Բիթլիսի վիլայէթուեան մէջ։

Հայ ազգաբնակութիւնն այնտեղ կըրկնակի կախումն ունի. մի կողմից նա պարտաւորուած է կանոնաւոր հարկ վճարել Սուլթանին, միւս կողմից ենթարկվում է քրդերի կամայական և աներիչ հարստահարութեանց. քրդերի, որոնց ձեռից տաճկական կառավարութիւնը չէ կարողանում կամ չէ կամենում պաշտպանել իր հպատակներին։

Ահա այդպիսի երկու կրակի մէջ գտնուելու դրութիւնը հարկադրում է հայերին երբեմն երբեմն մէկ կամ միւս կողմին հարկ վճարելուց հրաժարուել, և այդ լինում է տաճիկների վերաբերութեամբ, որովհետև քրդերն իրենց բաժինն ոյժով իրենք ստանում են։ 1879, 1882 և 1890 թուականների ապստամբութիւնները թուրքերը կարողացան հանգցնել «տեղային միջոցներով», առանց եւրոպական պետութեանց առանձին ուշադրութիւնը գրաւելու։

Հայերն անկասկած Օսմանեան պետութեան մէջ ամենաքաղաքակրթուած ազգն են կազմում։ Նրանք ունին դրականութիւն, մամուլ, դպրոցներ. ժողովրդին առաջնորդում է լուսաւորուած հոգևորականութիւնը։ Այդ բոլորը հիանալի միջոցներ է տալիս հայերին քաղաքական մրցումն վարելու։

Փոքր Ասիայում ցրուած հայերի մէջ վաղուց ագիտացիա է լինում, որ այդ երկիրը միանայ քրիստոնեայ պետութիւններից մէկի պաշտպանութեան տակ և հաւանական է, որ այդ պրոպագանդայի յաջողութիւնը պատճառ է եղել այն գաղանութիւնների, որոնցով ցանկացել են անհնազանդութեան ոգին շիջեցնել։ Եւրոպային վրդովող պատահարների ասպարէզ Սասունի գաւառը Տորոսի լանջերի վրայ է գտնվում, Մշոյ դաշտի և Մուշ քաղաքի հարաւ - արևմտեան կողմը։ Այդ շրջանի լեռնոտ մասերում բնակվում են քրդերը, իսկ դաշտի վրայ ցրուած են հայկական գիւղեր։ Ամբողջ երկրի առևտուրը և արդիւնաբերութիւնը գտնվում է հայերի ձեռքում, որոնց պատերազմսէր քուրդ ցեղերը ճնշում են և սաստիկ հարստահարում։ Սակայն միւս կողմից քրդերը շատ անգամ հայերին պաշտպանում են տաճկական հարստահրութիւնից։ Բայց որովհետև նոյն իսկ քրդերի մէջ կան զանազան ցեղեր, որոնք շատ անգամ միմեանց հետ կռվում են, այդ պատճառով հայերը չեն կարող վրդահ լինել, թէ մի ցեղի հետ բարեկամ լինելով, կ'ազատուին միւս ցեղերի յարձակումներից։ Հենց այդ պատճառով էլ Օսմանեան գայիսոնին ենթակայ Փոքր-Ասիական գաւառներում տիրում է կատարեալ անկարգութիւն։ Վաղուց ապացուցուած է, որ Բ. Դուռն անկարող է քրդերին զսպել և քրդերի անպատիժ մնալը նրանց համոզում է, թէ կառավարութիւնը հաւանութիւն է տալիս քրիստոնեաների դէմ նրանց գործած բռնաբարութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, ժամը 12½-ին Նորին Վեհափառութիւնն այցելեց Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչին ուղեկցութեամբ գերապատիւ Գէորգ և Կէրեզ եպիսկոպոսների, բարեշնորհ համազասպ և Նահապետ վարդապետների և դիւանապետ Յուսիկ արեղայի։

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանը փոխ-այցելութեան եկաւ Նորին Վեհափառութեան և սուրճ վայելեց։ Երկու այցելութիւնն էլ երկար են տևել և ինչպէս լսում է խօսակցութիւնը շատ մտերմական է եղել։

***

Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը ուրբաթ օրը բարեհաճեցաւ փոխ-այցելութեան գնալ Թիֆլիզի ազնուականների պարագլուխ՝ Նորին Կայսերական Գեղեցկութեան պալատի եգերմէյստեր իշխան Կոնստանդին Բագրատիոն-Մուխրանսկուն։

***

31 դեկտեմբերի առաւօտեան Նորին Վեհափառութեան ներկայացաւ Բագուայ Նիդերլանդիայի փոխ-հիպատոս Մաքսիմիլեան Զուէմխերը։

***

Դեկտեմբերի 30-ին բաղդ ունեցան Նորին Վեհափառութեան ներկայացնալու Վանայ Մայր եկեղեցու վերաշինութեան մասնաժողովի անդամները։

***

31-ն դեկտեմբերի դերապ. Կիւրեղ եպիսկոպոսը և բարեշնորհ Նահապետ վարդապետը փոխ-այցելութեան գնացին Վեհափառ Հայրապետի կողմից Թիֆլիզի կոմենդանտ դեներալ Բէյտերին, ոստիկանապետ Մաստիցկուն և իսկական պետական խորհրդական Ամբարդանովին։

***

Զարաթ օրը այրի տիկին Սոֆիա Իզմիրեանցը բաղդ ունեցաւ մատուցանելու Նորին Վեհափառութեան Նորին Սրբութեան ասբդնագործ զեղեցկահիւսպատկերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ «Նով. Օբզ.» ըստացել է հետևեալ հեռագիրը. — «Վիեննայից հեռագրում են «Նովոստին», թէ Փոքր-Ասիայի ափերի մօտ կայանաւորուեց մի ամերիկեան նաւ, որ տանում էր 10,000 հրացան տաճկական հայերի համար։»

***

Բերլինի դաշնագրութեան 62-րդ յօդուածն սկսում է հետևեալ քաղցրահնչիւն խօսքերով. «որովհետև Բարձրագոյն Դուռը հաստատ դիտաւորութիւն է յայտնել գործադրել կրօնական ազատութեան սկզբունքը լայնածաւալ նշանակութեամբ, դաշնագիրը պետութիւններն ընդունում են ի գիտութիւն իւրեանց այդ յօժարակամ յայտարարութիւնը»։

Արդ ահա ինչ են գրում մեզ Կ. Պոլսից։

«1895-ի օրացոյցի համար հրաման տուած էին և տպագրեցաւ, յետ տպագրութեան երբ դաւառները ղրկելու համար մաքսատուն կը տանեն գրավաճառք, պաշտօնեաները չեն թողուլ, և օրացոյցները վայր կը դնեն ասելով, որ վարդանաց ջրաբաշխ գրած է. պէտք է այդ բառը և 1036 վերցնել, Սարգսի ջրաբաշխ չասել, «Աբգար», «Տրդատ», «Թէոդոս» թագաւորներ չգրել և այլն»։

Տաճկաստանի մէջ ամենայն ինչ այդպէս է կատարվում, խօսքի և գործի մէջ ոչ մի առնչութիւն չկայ։

Եւրոպական պետութիւնները գէթ իրանց պատիւը պահելու համար պէտք է այլ ևս թոյլ չտան իրանց խաբելու դատարկ խօսքերով կամ ստախօս հերքումներով։

***

«ՎԱՐԻՆԳՏՈՆԻՑ «Հիս. Գործակ.» հեռագրում է մեզ. «Ներկայացուցչների պալատն ընդունել է այն ծրագիրը, որ Հայաստանում տեղի ունեցած անցքերի առթիւ առաջարկում է ամերիկեան հիւպատոսութիւն հաստատել Էրզրումում։»

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ հեռագրում են. «Նով. Վր.» հեռագրում են Լօնդօնից իբր թէ պաշտօնական տեղեկութիւններից յայտնի է որ Բրիտանական և ռուսաց կառավարութիւնները վճռել են հայկական խնդիրը մի ջազգային հարց չշինել։ Պետութեանց միջամտելը միայն կը բաւականանայ նրանով որ վրդովմունքները կըխաղաղացնեն և տաճկական հայերի վիճակը կըբարւոքեն։ «Այդ տեղեկութիւնը բոլորովին հակասում է «Daily News» տուած այն տեղեկութեան, որի մէջ ասուած է թէ նոյն իսկ Ռուսաց Վեհափառ Նիկոլայ II Կայսրը առաջին վճռելի խնդիրներից մէկն է համարում հայկական խնդիրը »

***

«Times»-ի Բերլինի թղթակիցը հաղորդում է, թէ Պետերբուրգ գնացող Փուտ փաշայի պաշտօնը բարդ է եղել։ Նա պէտք է հաղորդէր ռուս կառավարութեան և օտար պետութեանց Պետերբուրգի բոլոր ներկայացուցչներին տաճկաց կառավարութեան բոլոր մըտադրութիւնները հայկական խնդրի վերաբերմամբ։ Հմամաձայն նրան տուած հրահանգի նա պարտաւոր էր յայտարարել թէ Բարձրագոյն Դուռն իրը թէ վճռել է օժանդակել հիւպատոսական յանձնաժողովին լոյս սփռել հայկական խնդրի և Սասունի դէպքերի վրայ։ Բոլոր յանցաւորները խստիւ կըպատժուին։»

***

ԲԵՐԼԻՆ 31 դեկտ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Գերմանական լրագրները, որոնք համեմատաբար աւելի զգոյշ են հայկական խնդրի նկատմամբ, Տաճկահայաստանում պատահած դէպքերի առիթով առաջնորդող յօդուածներ, լուրեր, տեղեկութիւններ են հաղորդում համարեա ամեն օր։ Այստեղի հայագէտները մեծապէս օգտվում են «Արձագանքի» թղթակցութիւններից։ «Kölnische Zeitung»-ը հայոց համար շատ նպաստաւոր դիրք է բռնել և ընդարձակ թղթակցութիւններ է հրատարակում Կ. Պոլսից գրուած։ Ըստ էօքկէրը (Stöcker), որ պալատական քարոզիչ և պահպանողական կուսակցութեան մի մասի պարագլուխն է, շատ սիրով լսեց մի ձեռնհաս հայի բացատրութիւնները և նորա եկեղեցական թերթի համար գրած՝ ձեզ յայտնի յօդուածն ընդունեց առանց փոփոխութեան, խոստանալով իրենց կուսակցութեան, քաղաքական թերթերումն էլ արտատպել տալ։ Մի ուրիշ պատօր կամենում է մի բրոշիւր հրատարակել իր ծախսով Տաճկա-Հայաստանի ընդհանուր դրութեան մասին։

Գերմանական քաղաքականութեան դիրքն առ այժմ սպասողական է. եթէ երեք պետութիւնների դեսպանների քննութեան հետևանքն այն եղաւ, որ տաճիկները մեղաւոր են և հայերը ճնշուած, գերմանական պետութիւնն էլ կը խառնուի այդ «մարդասիրական» գործի յաջող լուծման մէջ։ Բայց խնդիր է այդ՝ դեսպանները պիտի կարողանան արդեօք ճշմարտապէս իրերի դրութեան տեղեկանալ։ Ըստ և շատ բան թարգմանններից է կախուած, միւս կողմից արդեօք ոստիկանութիւնը հնարներ չպէտք է գտնէ գոհունակութեան

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄՇԵՑՈՒ ՆՈՐ ՏԱՐՈՒ ԱՌԻԹՈՎ

Արդէն հին տարուայ ամենավերջի օրուայ մէջն ենք...

Դուրսը կաղկանձող քամին ու բուքը՝ սոսկալի մռնչիւններով կարծես ձիւնեղէն սիւներ են կանգնեցրեր երկրէն դէպի կապուտակ՝ բայց մռայլուած ու պղտորուած երկինքը։ Իսկ նա, այդ յամենայնի անխօս, անմռունչ ականատես վկայ երկինքը, ի վերուստ կարծես աւելի սրտմրտած դիմօք, իւր հողմավար սառնամանի օդերով թեթևաշարժ թեփիկների վերածելով օդի մէջ վիշապանման գալարուող այդ ձիւնահիւս սիւները՝ ցած, դէպի դեղջուկ ժողովրդի խարխուլ հիւղիկ-հողքանման բնակարանների ծակոտիքներէն ներս կը մաղէ նորա կազմութեան այդ բեկբեկուած մոեխները և ի դող ուսարսուռ կը հանէ դեղջուկ ժողովրդի սրմքած ու արիւնաձորուած սիրտն ու մարմինը... Որովհետև այդ օրը խոր ձմեռ է և Մշոյ աշխարհին յատուկ խստաշունչ եղանակի ամենակատաղի օրերէն մէկը։ Մշեցին, նահապետական կեանքի ու անցեալի այդ ճշգրիտ և անեղծ հայելին, նախ քան այդ նոր տարեթուի շէմքից ոտք ներս դնելը, արդեօք ինչպիսի պատրաստական ձևականութեամբ պիտի ընդառաջէ նորան, որպիսի տանջուած հոգւով ու ապագայի զեղուն փայլուն յոյսերով տեղ պիտի տայ նորան իւր այն սրտի մէջ, որին արդէն ամբողջապէս տիրած է հին տարուայ մռայլ յիշատակութեանց բիւրաւոր անբուժելի վիշաք ու տառապանքը, նեղութիւնք ու զրկանքը և աքսորի ու բանտերի, աշխարհաւեր գաղթականութեան ու պանդխտութեան այն սրտամաշ հիւծումը, որի ողբն ու ողկանը այսօր արդէն աշխարհիս ամենախուլ անկիւններ անգամ հասած ու վարագուրած է։ Եւ եթէ աշխարհիս ղեկավարներն անգամ կեղծեն ու լռեն նոցա այդ հառաչանաց ձայնի առաջ, անշուշտ եմ, որ անսեղ արիւնով ներկուած քարերը կ'աղաղակեն Մշեցու այն զրկանաց առթիւ, որ այսօր նա երբ աշխարհ կը բերէ մի նոր մանուկ—իւր համար չէ. կաշխատի դառն ու քրտնաթոր կերպով՝ նորա արդիւնքը չէ վիճակուած իւր վայելչութեան համար, սիրուն եղներ, աչագեղ հօտեր, գրաւիչ նախիրներ ու նժոյգ ձիեր կունենայ՝ սակայն նորա բոլորեքեանքը այսօր իւր կեանքի փառաւորութեանը չեն ծառայի. նորա սակաւ դէզերը, որ անպակաս է աշխատաւոր բազկի մը համար, այլոց քսակը կը պարարէ. նորա հրեշտականման գողտրիկ ու քնքուշ աղջկերքը՝ այսօր տափատ ան հաւատի կրից խաղալիք են. նորա սիրուն մանկիկը՝ այժմ անկրօն սրիկայի բռնաբարութեանց ենթակայ է, իսկ հարս ու կինը՝ հը՞... արդէն աղայի ու բէկի հարեմի առաջի զարդն ու բանաւոր գործիքն է և, վերջապէս, այն՝ ինչ որ իւր չարաչար աշխատանքով կոչուած է իւր կեանքի բարելաւութեան ու կենցաղավարութեան սատար դառնալու, այլոց սեպհականութիւն կը կազմէ այսօր...

Եւ այդ ամենը դիտդի մը այքին այնքան պարզ և դիւրըմբռնելի է, որքան ճշմարիտ է աչքին երևացող բարձր երկնակամարէն փայլող ճամանչաւոր արեգակը...

Ահա այս տառապանքներով ճմլուած սիրելի Մշեցին Նոր-տարուց ընդունելութեան առթիւ աւանդական եղած բոլոր կարգերը՝ կարգադրած, ամբողջ նկատելի պատրաստութիւնները, որոնք միմիայն ներկայիս կարօտ են ջանասէր բազուկներին, պատրաստութիւններ տեսած ու վերջացրած է. այն մշեցին, որի ծննդավայր որրանը կը կազմէ եղեմական դրախտի սիրուն ու հոգին, որի հովասուն ու զովասուն լեռներն ու ձորերը վարդ ու նուշ կը մատակարարեն տեղացի անբաղդ հայ ազգաբնակութեան, և ի մի բան՝

«Մշու աշխարհն անուշ է,
Սարն ու ձոր մշուշ է,
Հիւսիս քամին քշէ գիս
Իւր ծոցի մէջ թաղէ զիս .»

Նա, այդ անկարեկից Մշեցին, ահա թէ ինչեր է արեր նոր-տարուց ընդունելութեան առթիւ.—նախ և յառաջ դուրս է հաներ ու թափեր իւր բնակարանի ողորմելի ամբողջ կահ-կարասիքը, ամանս չամանեղէնը և՝ իւրաքանչիւրի պահանջի ու յարմարութեան համաձայն՝ զոմն լուացեր ու մաքրեր է, զոմն ևս ներեր ու թոթուեր է։ Տունը՝ իւր պատերով ու դռներով, առաստաղը իւր ծածկող բոլոր գերաններով ու սներով արդէն աւեր ու յստակեր է։ Եւ ինչու, որովհետև, ըմբռնած է նա սրտի անմեղ սրբութեամբ, Նոր տարի է, հետևապէս պարտ է ընդառաջել և ընդունել նորան ներքին, սրտի մաքուր պատրաստականութեան հետ և՝ արտաքին (ձևական) մաքրութեամբ ու պատրաստականութեամբ։ Այո, այդպէս է ուսած նա իւր երանելի նախապապերէն և այդպէս ալ կը ջանայ աւանդելու իւր յետնորդներին իւրաքանչիւր տօնի յաւուր պատշաճի աւանդական կարգն ու կանոնը, սովորոյթն ու բնոյթը։

Այն աւուր պատշաճի խորհրդաւոր սեղանը, որ իւր երեսի վրայ դարսուած ու կուտակուած բազմերանգ մրգերով, այլազան քաղցրաէնիքներով ու տարբեր տարբեր ոգելից ըմպելիքներով Նոր-տարուց վերահասութեանը մի կենդանի յուշարարի դերն ունին ստանձնած, և որի անհրաժեշտութիւնը՝ այլ աշխարհների վերաբերմամբ՝ մեծատունէն թէ տանանկէն՝ ընդունուած է՝ այստեղ, Մշեցու համար, կարծես նա գոյութիւն չունի։

Ինչու, մի՞թէ նա չգիտէ կամ չզգայ Նորա կարևորութիւնը, ուրախական վայելումը. ընդհակառակ, նա շատ լաւ հասկիր է առհասարակ դէպի այդ կերպ շողշողուն ձևերն, մանաւանդ երբ նա զուգուած լինի Նորաձևութեան նշաններով սակայն, ինչը՞ չի կարող անել մի բռնակալ բազուկ, երբ նա բոլորովին անսանձ կերպով կը գործէ, երբ, վերջապէս, շատ անգամ նոյն իսկ այդ «սակաների» մէջ կը սուզուի բազմաթիւ քստմնելի արարմանց նկարագիրն ու այնպէս անհետս կը կորչի...

Մշեցին՝ պտղաբեռնուած սեղանի փոխարէն ունի միայն ուռենու ոստիկ ձիւղերէն հիւսուած մի «բունիկ», որի մէջ կայ ընկած միայն մի քանի կնճիլ (կտոր) կկել ու կորեկ, իսկ Նորա կողքին մի սինի (ափէ) որի մէջ լեցուած կայ առառաւելն մի բուռն սև-չամիչ՝ բոլորաձև շրջազարդուած մի քանի հատ հոտած ու փթած բայց սառած խնձորներով, զորս տատէն (տանտիկին), լոյս յունվար մէկի առաւօտ, պիտի բաժանէ հատիկ-հատիկ իւր հոգածութեան տակ եղող գերդաստանական պետ ու մանր, արական ու իգական անդամոց։ Իսկ այցելող ազգականների, դրացիների ու բարեկամների համար, եթէ նա, ուր պիտի դան շնորհաւորելու Նոր-տարին, իսկական օջաղը կը կազմէ, եթէ նա, վերջապէս ճիւղաւորուած գերդաստանի բուն արմատն է, որից ծլած ու թփուած են այժմս մի քանի այլ գերդաստաններ, անշուշտ եթէ ոչ աւելի գէթ պատրաստի պիտի ունենայ մի փարջ գինի և՝ որպէս զի նուշ չլաց, սեղանի մոտ մի կթխաչափ միրգ, որպէս զի այցելող անհատը, եթէ նա արդէն կեանքի փորձաքարին ենթակայ է եղեր միայն՝ ի շնորհաւորումն Նոր-տարուն՝ ըմպէ մի բաժակ գինի և ընդունէ մի երկու հատ չամիչ, իսկ խնձոր՝ ոչ, որովհետև նա սեղանի զարդն է, նա երկու տարբեր սրտերի միաբանութեան ձուլարան, ընդունարան և շաղկապն է, նա նոյնպէս է վերջապէս, որ պիտի մնայ ցաւարտ սեղանի. խնձոր, որի հոտն ու գոյնը հաճելի է յաչս բոլորի։

Լոյս Նոր տարուց յունվարի 1-ին, գերդաստանի աւագ այր, այդ ծերունի նահապետ, ըստ սովորականի դուրս գալով այդ օրուայ առաւօտեան արարողութեամբ եկեղեցուց՝ կուգայ օդան և՝ իւր երկար սև-սաթեայ կամ դեղին քարուքարէ բերանակալ վառած խայտն-չիբուխը ի ձեռին, շիկագոյն, լայն, երկայն բայց առանց-թև ապան ուսերին կը բազմի օջաղ բուխարու կողքին, իւր սովորական տեղի վրայ և դիմագծութեան արտաքոյ կարգի յուզմամբ թէ որքան լի ցասմամբ, գլուխը դէպի երկիր քաշ

թղթեր գրել տալ։ Լուրջ պետի մը տածէք, եթէ այս անգամ խնդիրը կորաւ, այլևս անհնար կը լինի մեզ, գերմանացիներիս շարժել։ Առանց այն էլ Գերմանիայում մեծ կասկածանքով են նայում հայերի հրատարակած լուրերի վրայ, չափազանցութիւն են համարում այդ ամենը։

Commilitone.

***

Պետերբուրգից ստացած տեղեկութիւններին նայելով վճռուած է կարսի երկաթուղու կառուցանելուն ձեռնամուխ լինել առաջիկայ գարնան։ Այդ նպատակով առ այժմ յատկացրած է 6 միլիոն ռուբլի։

***

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ այս օրերս հրատարակուեցաւ ելևմտից նախարարութեան մշակած ծրագիրը կայսերութեան սահմանը ներմուծուող բամբակի մաքսը բարձրացնելու մասին։

***

Դեկտեմբերի 31-ին, առաւօտեան 9 ժամին, կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Թիֆլիսում Բելգիայի փոխ-հիւպատոս Բարսեղ Մեղվինեանը։

***

ՂԱԶԱԽ, դեկտ. 24-ին.

(Թղթակցութիւն «Արծագանքի»)

Ուխտատեղաց արդիւնքների «կուլ» դնալու առթիւ ցանկանում եմ մի երկու խօսք գրել։ Ամենքիս յայտնի է, որ մեր Հոլոր ուխտատեղաց արդիւնքները կլանվում են եթէ ոչ բոլորովին՝ գոնէ մեծ մասամբ։ Փաստերը պերճախօս ապացոյցներ են։

Այս անգամ կանդ կ'առնենք Ղազախու գաւառի ուխտատեղաց վրայ։ Համարեա Ղազախու բոլոր գիւղերն ունին իրանց ուխտատեղիները, որոնք տարուայ մէջ մի կամ մի քանի նշանաւոր օրերում տօներ ունին։ Ինչ ասել կուզի, որ ուխտաւորները բազմաթիւ են լինում։ Ով որ եղել է «Ս. Սարգիս», «Ս. Գրիգոր», «Սրվեղ» և «Խաչքազար» ուխտատեղաց տօներին, նա մեր ասածի ճշմարտութիւնը կը հաստատէ։ Մի երկու ուխտատեղի միայն յանձնուած է տեղական քահանային կամ գործակալին, որոնք «մաքրազարդելու» խիստ նուրբ ընդունակութիւն ունին և անում են. . . իսկ մնացեալները՝ «ով չիշտ, նա կուշտ», որ քահանան կամ երեցփոխը շուտ է հասնում «նրա տարածն» է։

Նախ թուենք գլխաւոր ուխտատեղիները. Ս. Գրիգոր, որ գտնվում է Սև-Քար գիւղի հանդումն, և որի արգի նքբ յատկացրած է հարուստ Ներսիսեան դրպրանոցին, այն ինչ գիւղի դպրոցը փակուելու մօտ է նիւթականի սղութեան պատճառաւ։ Սորա տօնը լինում է վարդավառին. այդ օրը ամէն կողմից ջերմեռանդ ադօթողների լեգէոն է թափվում, «Ս. Պապ Գրիգորի լիս Փողին արժանանում». ուր գիշերում են և միւս օրը հարիւրաւոր գառներ մորթելով՝ էրին ու մորթին տալիս են տեղական գործակալին ու հեռանում, առանց համար ու հաշիւ պահանջելու թէ հուր է գնում իւրեանց տուած արդիւնքը, որքան է մորթիքը, աջահամբոյրը, ինչ գնով է ծախվում և այլն և այլն, դրա վրայ հսկող չկայ։ Իսկ տէր գործակալը ըստ «իւրումն բարեհաջեցողութեան» հաշիւը ներկայացնում է Ներսիսեան Դպրանոցի Հոգաբարձութեանը, որից անմիջապէս «ստացական» է ստանում ու «պրծաւ գնաց», հանգիստ սրտով երկու կողմն էլ գոհ են մնում...։

Ապա գալիս է «Ս. Սարգիս», անունն արդէն գրական է, որ արդիւնքը տարեկան հարիւր ռուբլուց աւելի է։ բայց որքանն է տեղ հասնում։ այդ Սլլահը գիտէ...։

«Սրվեղ» որ գտնվում է Ուզունթալա գիւղի մօտ, դէպի հարաւ, անտառապատ սարադաշտում, տարեկան կը բերի մօտ հարիւր ռուբլի։ Նոյնչափ և «Խաչքազարը»։ Կան և վանքեր։ Մակարայ վանք, Գոշավանք և Հաղարծին, որոց ուխտաւորները նոյնպէս անպակաս են. ևս Մողնի, Քուխտակ վանք, Կիրանց, ս. Սարգիս, Աստուածածին, Զարդախու, ս. Յովհաննէս և այլն, և այլն։ Ղազախու գաւառը առ նուազն կունենայ աւելի քան վաթսուն ուխտատեղի, որոց արդիւնքը տարեկան, համարձակ կարելի է ասել, հազար ռուբլուց աւելի է։ Բայց թէ որ փորը քաղցած գործակալն է մաքրազարդում, տրեխները կօշիկներ շինում, մենք մատնացոյց չենք լինում։ այլ թողնում ենք, որ Կոնսիստորիան նշանակէ մի քննիչ, նախ իմանայ ուղիստատեղաց որքանութիւնը, տօների օրը, ներկայ լինի տօներին, արդեանց որքանութիւնն աչքով տեսնի և այնուհետև կարգադրութիւն լինի որ արդիւնքները կուլ չգնան սրա կամ նրա անյատակ փորը...։

«Մ.»

***

Հինգշաբթի, դեկտեմբերի 29 ին ազնուականաց բանկի թատրոնում կայացաւ պ. Գիպրոսեանի Ներքոյսումը, որ մի կատարեալ ծաղր ու հայհոյանք էր դեղարուեստի և Զէքսպիրի դէմ։ Մենք ի հարկէ ոչինչ չենք կարող ասել այդ օրուան «Օտելլոյի» և նրա մասնակցողների մասին, որովհետև ամբողջ խաղը և անսամբլը ստոր են որ և է կրիտիկայից։ Հարկ ենք համարում սակայն նկատել պ. Պետրոսեանին, որ այդ տեսակ ներկայացումները կարող են միայն յետ հրել թատրոնից այն հասարակութիւնը, որ այնպիսի սիրալիր պատրաստականութեամբ այդ օրը եկել էր վարձատրելու իւր բեմի դերասաններից մէկին։

***

Խմբագրութիւնս ստացաւ պ. Մակար Ձմշկեանի կազմած «1895 Ռուսի ժողովրդական պոչիլ-զրոյ ինչ-որ օրացոյց»-ը։ Այդ հրատարակութիւնը, որ արդէն ութերորդ տարին է լոյս տեսնում, կազմուած է բաւական խնամքով։ Պատկերները յաջողուած են։ Գրքի գինը համեմատելով իր մեծութեանը, ծաւալին և տպագրութեանը, շատ էժան է — 25 կոպ։

ձգած, ու կարծես մի ինչ որ վերազարթնող անախորժ յիշողութիւններ խեղդելու համար, կըսկսի անյագ կերպով ծծել նորա մթամած ծուխը և՝ քիչ մը ատեն սրտի խորքում թաղելէն յետոյ՝ ապա կումբ կումբ՝ ինչպէս շնչասպառ գերեալի մը վերջին շունչ, կամ որպէս դէպի երկինք բարձրացող քուլա-քուլա թուխպ-թուխպ ամպիկներ, խորին ու անվերջ թառաչներով արձակել ու սուզեալ սրտի բռնտէն դուրս տալ նորան՝ քըթի երկու ցմքած խողովակների միջոցաւ...

Եւ երկար չի տևէ միայնութեան այս սրտամրմուռ թախիծը, և ահա պահ մը ևս արդէն շար ի շար՝ տարիքի ու յարգանքի պահանջման համաձայն՝ ներս կանցնի օջաղական մի մարդկեղէն շղթայ ու նահապետական սրբազնացած օրէնքով «Ողորմի Աստուած», եթէ նոքա այդ բոպէին եկեղեցուց, Աստուծոյ այդ վեհասփոփ տանից կուգան և կամ «բարի լոյս «ափ» խորին և պատկառելի ողջոյնով առաջ անցնելով դէպի ծերուկնահապետ կը մատչեն նոքա ի համբոյր նորա ոսկրացած ձեռաց՝ հարցնելու մրմնաջալով —«շնորհաւոր Նոր տարի, «ափ», բարով ու խէրով, սաղ մարմնով ու անթաց աչօք տարի մըլէ յքսոր հանիս, հոգով մխիթարուես ու մեզմով, որ արժանի չենք քու անուն անգամ տալ, մուրազ ուես և ուրախանաս, քու աչն ու ա

զդօթքն, բարեխօսութիւնն ու օրհնենք անպակաս անես մեզմէ...

Ծերուկը, որի արտաքին ձևն ու արտայայտութիւնը միմիայն մարմնացած վշտի ու տանջանաց մի ամփոփ պահարանի տիպար կը ներկայացնէ, որ միայն ներկայացուցիչ է արանց դասին, կանանց ընդունելութիւնը թողնելով «տատէին», զողոջուն շարժուածքով կը ջանայ հաղիւ ոտքի բարձրանալ և համբոյրախառն սիրով բաղդաւորացնել նոցա ըսելով.—«շնորհակալ եմ, զաւակունքս ու թոռնիկներս, շատ ու շատ շնորհակալ եմ ձեզմէ և ձեր մանրիկ ձագուկներէն։ Ծերութեան այս դառն օրերին դուք ձեր հրեշտակային երամական դասով էք եղեր իմ միակ մխիթարութիւնն ու սփոփանքը. ձեր Նոր-տարին ևս շնորհաւոր ու ուրախութեամբ լինի, ծլիք, ծաղկիք ու թփռիք և՝ քան զհայր Աբրահամու զաւակունք՝ բազմանաք ծովի աւազէն և տիրէք ձեր հող ու ջրին, օջաղ ու վաթանին, չլինիք դուշմանին կոխ, չարա կանին ծաղրական, գրացուն՝ կարօտ. չփակուի ձեր դուռ աղքատի ու խոնաղի (հիւր) առաջ, ինչպէս էջ փակուած մինչև այժմ. չկտրի ձեր «տուրքն» ու «պտղին» վանքերու, սրբերու, եկեղեցիներու ու մեռելոցի պսյծառութեան ու շինութեան համար. եթէ քարի հանդիպիք՝ աղբիւր բղխի, եթէ այրուածի ու չորացածի սատահիք՝ թարմ կանաչ դառնայ,

---

Եթէ, իմ անբաղդ զաւակունքս, այս տարի որ արդէն եկաւ, անցաւ ու հնութեան անյատակ անդունդին մէջ գլոր եցաւ անկանդնելի կերպով, լաղթ մը չառինք ու չտեսանք մեր հալէն ու կեանքէն, պըրի (գոնէ) մաղթենք ու յուսանք վերին Տեսչութենէն, որ թեակոխող տարին՝ իւր հետ բերած նորանոր ուրախութիւններով՝ մոռացնէ յուսահատութեան հասած հնից կրած այն վիշտն ու կսկիծ.

«Երբ չունինք հանգիստ, ինչ ընենք վաստակ,
Ի՞նչ բանանք ժամեր՝ խաչն է ոտի տակ,
Ի՞նչ արժէ դպրոց՝ երբ ազգով կորանք,
Առաջնորդարանը՝ ինչ ընենք դատարկ ..»

Եւ այսպէս՝

«Ամէն բան մէկ հեղ ոտքի տակ գընաց.
Աղի ու լեղի դարձաւ ջուրն ու հաց...»

Ե՞ա... արտասրախառն կըմկըմոցով... հէ՛յ դունեա, վա՛յ՝

Զարխի-ֆալաք, սէնրն էլինտէն.

Ղան թիօքիւլդի կեօզլերիմդէն—(ով աշխարհ ո՞հ բաղդի դեկավարիչ, քու ձեռքէն, աչքերէս արիւն կաթեց), մինչև կեանքիս այս բարձր սանդուղին հասնել դեռ չտեսի մի տարի, որ իւր անանցան սրտասփոփ բարեմասնութիւններով մոռացնէր մեր հին վիշտը։

Թէ ինչու համար ծնանք ու աշխարհքան խիստ չէն այդ կասկածները, որ ես նոցա վրայ պնդել կարողանալի։ Հարկաւոր չեմ համարում թեթև կէտերի տարբերութեան վրայ կանգնել։ Այս ուսումնասիրութիւնը մեծ պատիւ է բերում հեղինակին։

*

Զատ ուրախալի է որ Թիֆլիզի Հրատարակչական ընկերութիւնը իւր բազմաթիւ մանր մունր մանկական այլ և այլ հրատարակութիւններից յետոյ երկու տարուց ի վեր խոստացրած Ս. Ս. Գրիգորեանի «Ննջեցեալ Հայոց պատմութիւն» Բ. հատորը սկսել է տպագրել, և այսօր ահա տարուայ վերջին օրը խմբագրութիւնս ստացաւ այդ հատորի ա. մասը։

Այս գիրքն արժանի է առանձին ուշադրութեան ամենայն մի հայոց պատմութեամբ լուրջ զբաղուողի համար։

Լիբէկում 1895 թ. յուլիսի 1-ից մինչև 30 սեպտեմբերի տեղի կունենայ մի առևտրական-արդիւնաբերական ցուցահանդէս այն ապրանքների, որոնք առևտրական ներմուծման և արտահանութեան նիւթ են տալիս Գերմանիայի և Ռուսաստանի, Ֆինլանդիայի և Զվեդիայի, Նորվեգիայի և Դանիայի մէջ։ Ցուցահանդիսի նպատակն է ցոյց տալ այդ երկիրների առևտրական յարաբերութեանց ներկայ վիճակն և նորա ապագայ զարգացման հնարաւոր միջոցները։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Տիւբինգէնի համալսարանի կաթոլիկ աստուածաբանութեան ուսուցչապետ Ֆունկը «Theologische Qartalschrift»-ի մէջ հետևեալ քննութիւնն է գրել շնորհ. Կարապետ սարկաւագի (այժմ աբեղայ) Die Paulikianer in byzantinischen Kaiserreiche und verwandte Ketzerische Erscheinungen in Armenien գրքի մասին։

Պաւղիկեանների պատմութեան նիւթը հաստատուաց 1853 թ. երբ Մուրալտի ձեռքով հրատարակուեցաւ Գէորգ Համարտոլոսի ժամանակագրութիւնը, բայց պակասում էր մինչև այժմ այդ նիւթի քննութիւնը։ Այդ գոլծը կատարել է վերոյիշեալ գրքի հեղինակը, որի գիրքը երեք մասի է բաժանվում։ Առաջին մասը վերաբերում է աղբիւրների քննութեանը. ամենից աւելի շեշտուած է այստեղ այն կէտը, թէ Գէորգիոսի տուած տեղեկութիւնները բառացի նման են Պետրոս Հեգումենուսի Պաւղիկեանների մասին գրած գրքոյկին։ Այս գրքոյկը հրատարակել է Գիզլերը Երևելի յաւելուած Պետրոս Սիկիլիուսի, որ նա քաղուածք է համարում նորա մի աւելի մեծ աշխատութեան։ Ապա համեմատելով երկու նման տեղեկութիւնները (Berichte) այն եզրակացութեան է հասնում, որ Հեգումենուսի գիրքը աւելի առաջ է և ուրեմն ամենահին տեղեկութիւնը Պաւղիկեանների վերաբերութեամբ։ Յետոյ ցոյց է տալիս, որ Փոտի տեղեկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վիճաբանական նպատակների համար Հեգումենուսի գրքի ընդարձակումը, որ յետոյ միացել է մի ուրիշ գրքի, որ Մանիքեցիների վերաբերութեամբ համառօտ և Պաւղիկեանների մի ընդարձակ պատմութիւն էր բովանդակում, այնպէս որ Փոտի անունով մնացած ամբողջ երկի մէջ երկու տարբեր աղբիւրներ պէտք է որոշել։ Վերջապէս ցոյց է տալիս, որ Պետրոս Սիկուլուսը ժամանակակից չէր լինելով ոչ Փոտ պատրիարքին և ոչ Բարսեղ Մակեդոնացուն՝ նորա երկը վաւերական չէ այն տեսակէտից, որ նա ենթադրում է թէ այս ամբողջ երկը Փոտն է գրել։ Երկրորդ մասը վերաբերում է Պաւղիկեանների նման երևոյթներին և շատ նոր լուսաբանութիւններ է տալիս։ Երրորդ մասում իւր ասած քննութեան վրայ հիմնուելով փորձում է Պաւղիկեանների պատմութիւնը տալ։ Յաւելուածը մեծ մասով անտիպ կամ չթարգմանուած գրուածքներ են, որ այժմ հեղինակը գերմաներէնի է թարգմանել։

Ուսումնասիրութիւնը շատ նպաստաւոր տպաւորութիւն է անում, այնպէս որ առանց այդ խնդրին վերաբերեալ գրքերը նորից քննելու, կարելի էր համաձայնել հեղինակի եզրակացութիւնների հետ. սակայն չեմ կարող չյիշել, թէ մէջ բերուած աղբիւրների դասաւորութեան դէմ մի քանի տարակոյսներ ունիմ։ Առանց տարակոյսների չեն լինում այդպիսի խնդիրները, բայց այս դէպքում այն-

---

եկանք, երբ կեանքերնիս շարունակ տանջանաց ուղիի վրայ է կանգնած. կեանքը որ բնականաբար պիտի աճի, զարգանայ և օրըստօրէ բարգաւաճի և յառաջդիմէ դէպի լաւն ու բարին, նորոգումն ու բարեփոխումը, բերկրանքն ու երջանկութիւնը իսկ մեզ համար օ՜. . դոքա դեռ արտամաշ երազներ, խոլական անուրջներ են։ Չեմ կարող յիշել մի տարի, մի բոլորովին նոր թեւակոխող մի տարի, որ հարատաւոր երանութիւններով, որդեակք իմ, չյիշեցնէր զհին, որի դառնութեան մրուրը վերջապէս ըմպելու քաջութիւն ունեցած ենք մինչև նորի յաջորդումը, մինչև այսօր, այս բոպէիս անդամ։

Արդեօք եղեր է տարի ու ժամանակ, որ չողբայինք.

Սով՝ երաշտութիւնից,
Սով՝ ժանգից,
Սով՝ մորեխից,
Սով՝ անկրօնների ալան-թալաններից,
Սով՝ աւազակների հրձիգումներից,
Սով՝ հարազատ եղբայրների կուշտ տեսութեան,
Սով՝ գաղթականութիւնից,
Սով՝ սակաւ կամ բնաւ չեղած անսերմնացանութիւնից,
Սով՝ կեանքի ու գոյքի ապահովութեան,
Սով՝ բարոյական քարոզիչ ու ղեկավար առաջնորդների,
Սով՝ քահանայից.

կը հերքուին նաև այնպիսի իրողութիւններ, որոնք Սասունի, Վանի, Մշոյ, Բաղէշի և այլ հեռաւոր խուլ անկիւններու մէջ կատարուած չեն, այլ լուսաւոր աշխարհի աչքին առաջ, ցերեկուան լոյսի տակ։ Ի՞նչ, մեր կառավարութեան հիւպատոսները, կը կարծեն թէ Տրապիզոնի, Սամսունի, և այլ ծովեզրեայ քաղաքները Սասնոյ լեռնէրն են, որտեղ օջինաւոր անցագիրներ ձեռքերնին ունեցող հարիւրաւոր պանդուխտ թշուառ հայեր՝ արգելուեցան իրենց ճամբան շարունակելու, և իրենց հայրենի օջախի տեսութենէն յուսակտուր՝ արտասուալի աչքերով, կարօտակէզ սրտով նորէն վերադարձան այն տեղեր՝ ուսկից մեկնած էին. նորէն պանդխտեցին...։ Ի Կ Պոլիս ոչ մէկուն համար գաղտնիք չէ, այդ անլուր բարբարոսութիւնը չկատարուեցաւ նաև ռուս-տաճկական սահմանագլխին վրայ, ուր տեղական իշխանութիւններէն արգելուեցան իրենց երկիր վերադարձող հարիւրաւոր մշակներ, թէև նոքա ևս ունէին օրինաւոր անցագիրներ...Քուրդ Համիդիէ աւազակի զորձած բարբարոս վարմունքէն ինչով տարբեր է տաճկական պաշտօնեաներու այն վարմունքն որ բռնութեամբ աքսորի, տարագրութեան կը դատապարտեն բազմաչարչար հայ երկրագործ ժողովուրդը... Կը հարցնենք, ասոնք ալ ապստամբներ կամ ըստ թուրք կառավարութեան աւազակներ էին, այս խեղճ, ողորմելի հարիւրաւոր թշուառներն ալ «մելիքեջ»-ներ էին, որ այդպէս կը ստիպուէին բռնութեամբ քաւել իրենց չգործած յանցանքը...եւ ինչպէս վերջացաւ այս խայտառակ պատմութիւնը...։ Ի՞նչ պատասխանեցին հիւպատոսները այն մշակներուն, որոնց անցագրեր էին տրուած...Բոլորի մասին հաստատ տեղեկութիւն չունիմ, բայց մէկ հիւպատոս վերադարձուցեր էր մշակներուն իւր իբրև անցագրի վարձ ստացած գումարի կէսը. իսկ միւս կէսը...Եթէ այս որ ցերեկով կատարուած գէպքն ալ հերքուի, մենք յանձն կ'առնուանենք այդ հիւպատոսին անունը։ Ուրեմն խեղճ թուրքահպատակները ոչ միայն իրենց անկարգ երկրին մէջ պիտի կրեն ամէն տեսակ զրկանք և հարստահարութիւն, այլ և իրենց երկրէն դուրս նոյն կառավարութեան պաշտօնեայներէն։ Յանկալի էր որ Թուրաց բարեխնամ կառավարութիւնը հսկէր այդ զեղծումներուն վրայ և պաշտպանէր խեղճ և անտէր մնացած ժողովուրդը, որ այս ըստէս ահաբեկ կը փախչի իւր «Աւետեաց երկիր» հռչակուած հողին, և տեղ մը կը փնտռէ իւր գլուխը թաղցնելու։

Կը կարծենք որ այս ժամուս տաճկական կառավարութեան համար աւելի նպատակայարմար է իւր հպատակաց պատուի, կենաց, ընչից, ապահովութեան, վայրենի համիդիէներու զինաթափման, պաշտօնեայներու կաշառակերութեան և այլ բարեկարգութեանց մասին մտածել, քան թէ տաք սենեակներու մէջ, ծալապատիկ նստած, մանշալի քով սուրճ խմելով և ծխախոտ քաշելով, զանազան տրպարաններու և պասպորթներու մասին անպէտք յօդուածներ խիքագրելով զբաղել։ Բայց մեր առատագութ Սուլթանի երկիրներու մէջ և իշխանութեան տակ զարմանալի ոչինչ չկայ և ամէն ինչ ընդհակառակն է, մինչդեռ խեղճ Զինացոց անունն է կոտրած։ Օրինակներ կուզէք, ահաւասիկ, թիւրքաց տառերը ոչ թէ ձախէն աջ, այլ աջէն ձախ կը գրուին. անոնք կը գրեն ոչ թէ սեղանի վրայ դրած, այլ ծնկան, անոնք կը նստեն ոչ թէ աթոռի վերայ, այլ ծալապատիկ, ուղղի պէս. անոնք օտար երկիրներու նման ոչ թէ կը քաշվերեն, այլ կուտան երկրագործ տարրին, այլ կը կողոպտեն, կը հարստահարեն և եթէ դարձեալ ողջ մնացին, չարաչար կը սպաննեն։ Ուրիշ երկիրներու մէջ եթէ ապստամբ գտնուի, ապարդիւն կ'անուանեն, մինչդեռ կառավարութիւնը ապարդիւն կ'անուանեն, ուրիշ երկիրներու աւազակաբարոյ վրանաբնակ ցեղերը զինաթափ [illegible], մեր կառավարութիւնը Մարկերեան հրացանով կը զինէ զանոնք։ ուրիշ երկիրներ կրսեն թէ «մածունը ճերմակ է», մեր կառավարութիւնը կը պնդէ և հերքումներով ալ կը ջանայ հաստատել թէ «մածունը սև է»։ Ուրիշ երկիներու մէջ եթէ սով ըլլայ, բացարձակ կը յայտարարեն թէ «սով կայ». եթէ ամբողջ Հայաստան սովի ձեռքէն ամայանայ, դարձեալ մեր կառավարութիւնը կը պնդէ թէ «սով չկայ», այլ մի թեթև արմտիքի թանգութիւն կայ» և կ'արդելէ ո՛ և է նպաստ բաշխուիլ ժողովրդեան. ուրիշ երկիրներ արեգակէն կը հեռացնեն տարին և ամիսը, իսկ թուրքերը՝ լուսնէն, և վերջապէս ամբողջ լուսաւորեալ աշխարհը հայերուս ձայնին արձագանք դառնալով մի օդտաւէտ, աշխատասէր և քաջ առ քաջ լուսաւորութեան հետապնդող մի ժողովրդի կեանքին, կայքին, պատուին պաշտպանումը կը պահանջէ, մեր կառավարութիւնը սուտ խուլ ձևացած [illegible] ընդհանուր և բարձրագոյ[illegible]կին՝ տպարաններու և պաշտպ[illegible]ու համար նոր կանոններ [illegible]ելով կը դրդռի...։ Ահա այս ալ [illegible]նորոգումներ, այս ալ 61-րորդ յօդուած...

Սրբէն։

—Ղարիպի սիրտն է խոց, աչքերը միշտ թաց,
Ջուրն է լեղի, կերած հաց վարամ,
Ոչ զօրն հանդիստ և ոչ քուն պիշեր...»

ու այսպէս շատ մը տխուր անցեալի ճմլող յիշողութիւնների բեղումը, որից միայն վիշտ և անմոռաց ու անսահման վիշտ կը փչէ...

Դէ, զաւակունքս ու թոռնիկներս, եզրափակելով իւր ասուած, հարկաւոր է պահ մը մոռանալ, որովհետև արար աշխարհ այսօր արտաքոյ կարգի ցնծումով կը խնդայ ու կը բերկրի. մոռանալ՝ որովհետև անկարող ենք այս բոպէիս տեսնել ու մխիթարուել մեր զարիբներիս սիրատչոր ներկայութեամբ, վերջապէս, մոռանալ՝ որովհետև այսօր բաղդի անիւը՝ մեր վերաբերմամբ՝ հակառակ կը թաւալի. մոռանանք մենք, այժ բայց միթէ՝

«Ատուած չըլսէ՝ ու դրանուկ մը բացցէ,
Ինքը մէկ է՝ դռներ հազար է»։

Եւ որից յետոյ կարգաւ ըմպելով մի-մի կթիլայ (բաժակ) գինի՝ կ'արձակուեն նոքա։

Ու այսպէս Մշեցու կեանքէն տառապալի մի տարի ևս սահելով կ'անցնի՝ տեղի տալով մի բոլորովին նոր անորոշ ու անճանաչ տարեթիւ...։

Իգիրեաչի։

Սով՝ վարժապետների,
Սով՝ վարժուհիների,
Սով՝ լսեցէք կաղաչեմ՝ հազատեղէնի, սով ջրի ու ազի, արձակ-համարձակ, իւր դաշտն ու դուրան, իւր անդնու անդաստան մանգալու, սով հարեան գիւղի բարեկամների այցելութեան, Աստուծոյ հիւրերին պահելու և կերակրելուն, սով փափախ ու եափի ջի գործածելու (որովհետև այդ նշան է յեղափոխականի) և վերջապէս սով կեանքի ու կենցաղավարութեան ու, սով, սով ու էլի անվերջ սով... Եւ մենք, որ մեր կեանքի սկզբնաւորութեան օրէն մինչև այս կէտիս, կայրինք ու կը խարկինք այս հազարաւոր անվերջ «սովերի» շիկացած բովի ու խարոյկի վրայ, ով գիտէ, Աստուած իմ, որպէսի դալարող տանջանքի հիրանեներին են մատնուած այսօր, այս սրբազնացած խորհրդաւոր բոպէներին, մեր այն սիրելի «զարիբ-զուրբաթների» սիրտն ու հոգին, որ ընկած են մեզնէ հեռու՝ եօթսարու ետև՝ առանց անկիր ու անկարեկից սրտերի, անմաքրող ու անփայփայող ձեռքերի։ Նոքա այսօր անգամ սիրելիների ցերկուբտեք փոխադարձ կարօտի լրիւը կը սպասեն միայն անողոք երկնոց երեւէն սաւառնող կռունկի խաբրի կին», անշուշտ տալով նոքան իրանց սրտի այն զգՁման խոստովանութիւնը՝

«Բեզ խապրիկ հարցնողին՝ ինչ կրես
Ելարբ,

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՆԻՑ մեզ հաղորդում են՝ թէ «Աշխարհքին յայտնի եղող Վանայ նահանգի, Կուռուբաշի փշաքաղ դէպքը, որ 1894 թուի ամրան ըսկզբներին տեղի ունեցաւ Համիդիէյի գնդապետների և մի քանի օրինական զապթիաների ձեռօք, այս օրերս քննութեան առնուեց և այն ժամանակուայ արիւնարբու հերոսները ազատ արձակուեցան, իսկ նոցա փոխարէն ձերբակալուեցաւ Վանեցի երիտասարդ Բաղշցեան պ. Մանուկ, որպէս գործին հեղինակ խմբապետ։

Դէպքը, որ չենք յուսայ թէ իւրաքանչիւր ընթերցողի յիշողութիւնից վրիպած լինի, այն է, որ միջօրէին մի խումբ Համիդիէ զինուորներ՝ խառն կառավարչական պաշտօնեաներով, յարձակում կը գործեն Կուռուբաշի բանջարաքաղ օրիորդների և երիտասարդների վրայ և նոցանէ 4 երիտասարդ սրախօսող կը նահատակեն, իսկ 4 կոյս աղջկերք ևս սարսափելի տանջանքների ներքոյ կը բռնաբարեն։ Դէպքի ծանրութեան վրայ մի գաղափար տալու համար հերիք է ասել, որ երբ խոխոջեալ երիտասարդների արիւնաշաղաղ և գլխազուրկ դիակները բերուեցան քաղաք և՝ ի միջի հազարաւոր այցելուների, տեսաւ նաև Անգլիայի հիւպատոսի կինը, անմիջապէս ուշագնաց եղաւ և հազիւ հազ ազատեցաւ մահից։ Այս բանը՝ իւր մանրամասն պարագաներով՝ արդէն իւր ժամանակին հաղորդուեցաւ ուր որ հարկն էր։

Բռնաբարուած օրիորդներն արդէն քանիցս անգամ առանձին աղերսագրերով դիմեցին կուսակալ Պահրի փաշային և յայտնեցին, որ բոլորովին զուր տեղ է ձերբակալուած պ. Բաղշցեանը, քանի որ առանձին նշաններով իրանց յայտնի են այն արիւնարբու չարագործները, որոնք համարձակեցան կատարել այդ զազանութիւնները. իսկ նշանները դրել էին իրանք բռնաբարուած օրիորդները՝ նոցա գաղանացած ու բթացած բոպէներին և այդ նշաններով իսկ ձերբակալել տուին նոցա։ Այս փաստական միջոցներից յետոյ դարձեալ հայ ազգի ամենասիրելի Պահրին, որ ազգականն է տխրահռչակ Մուսա-բէկին, խուլ և անգիտակ կը ձեւանայ, հետևապէս ոչ լսող կայ և ոչ հետաքրքրող այդ գործին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1894 թիւը Եւրոպայի համար ձիթենու տերև բերեց, իսկ Ասիայի համար սուր։ Այդ տարուան ընթացքում եւրոպական բոլոր պետութիւնները ամենայն կերպ աշխատում էին խաղաղութիւն պահպանել և արեան ոչ մի կաթիլ չվոթել։ Մինչև անգամ անհաշտ թշնամեաց՝ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ խաղաղութեան փորձեր և նշաններ եղան։ Այդ տարի կայացաւ միջազգային խաղաղասիրութեան վեհաժողովը։ Այդ ներքին խաղաղասիրական դրութեան հերոսն էր որ Եւրոպայի մէջ ընդհանուր մարդկային իդէալների զարգանալուն մեծ զարկ տուեց և՝ ի դէմս եւրոպական մեծ պետութեան՝ Անգղիայի նա ձգտումն արտայայտեց յանուն մարդկային իրաւանց պաշտպան կանգնել այն հալածուած համայքների, որոնք ընդունակ են եւրոպական քաղաքակրթութեան, բայց ընկճուած են ասիական բռնակալութեան տակ, ճշմարիտ է եւրոպական զանազան պետութեանց մէջ տեղի ունեցան ներքին բաւական մեծ խլրտումներ. Ֆրանսիայում անիշխանականութիւնը հասաւ իր գագաթնակէտին, խանգարեց առ ժամանակ քաղաքակրթութեան կանոնաւոր ընթացքը, զոհելով իւր արիւնծարաւ ձգտման Ֆրանսիայի ամենաազնիւ քաղաքացիներից մէկին՝ հասարակապետութեան նախագահ Սադի-Կարնոյին, բայց ժողովրդական գիտակցութիւնը ժամանակին կարողացաւ կազդուրուել իր կրած ծանր ցնցումից և շուտով գործերն իրենց կանոնաւոր ընթացքն ու կերպարանքն ստացան։ Պետութեանց միահամուռ ջանքերով ու վճռական միջոցներով վերջականապէս ջլատուեց այն կոյր ոյժը, որ չէ ընդունում ոչ քաղաքակրթութիւն, ոչ գիտութիւն, ոչ օրէնք, ոչ կարգ, ոչ կանոն։

Գերմանիայում և Աւստրօ-Հունգարիայում տեղի ունեցան մի շարք օրէնսդրութիւններ յօգուտ ժողովրդական իրաւանց և ժողովրդական կեանքի անդորրութեան։ Եւրոպական մամլոյ համայքների շահերն սկսեցին իրենց պահանջներն արտայայտել և բաւարարութիւն պահանջել։ Խաղաղութիւնը միջոց տուեց քաղաքական և պետական գործիչներին բանալ ահագին ցանցեր ձգած կաշառակերութիւններ, չարագործութիւններ և շանտաժներ, որոնք Իտալիայում բուն էին դրել պետական դրամատանը, իսկ Ֆրանսիայում մամուլի մէջ։

Ռուսաստանի նոր երիտասարդ Թագակալ Կայսրը իր առաջին քայլն սկսեց ողորմած ներողամտութեամբ և անձնական ձեռնհասութեամբ պետական հերթական խնդիրների։

Մինչդեռ Եւրոպայում ընդհանուր ջանք էր գործադրվում խաղաղութիւն պահպանելու, հեռու Ասիայում փրթեց սոսկալի պատերազմ և արեան գետեր սկսեցին հոսել Չինաստանում և Ճափոնիայում։ Բայց այդ քաղաքական պատերազմը ծագեց երկու պետութեանց մէջ, որոնք երկուսն ևս ունին իրենց զօրաբանակները և նաւատորմիղը. իսկ միւս կողմը արևմտեան Ասիայի տաճկական գաւառներում բարբարոսական թուրք և քուրդ հրոսակները զէնք բարձրացրին անմեղ ազգաբնակութեան վրայ, արիւնով ներկեցին երկրագործ ժողովրդի տունն ու դաշտը, անդաստանն ու եկեղեցին։ Եւ մինչդեռ Եւրոպան լաւ դիտում էր Չինաստանի և Ճափոնիայի պատերազմը, չկարողացաւ լռել այն սոսկալի բարբարոսութիւնների առթիւ, որ տեղի էին ունենում անպաշտպան թշուառ ժողովուրդի վրայ։

Տասնեակ հազարաւոր զոհերի բողոքը հասաւ մինչև եւրոպական մեծ պետութեանց սեղանը և 1894 թուականում սեղի ունեցաւ պատմութեան մէջ չլսուած ու չտեսնուած դէպք։ Միշտ քրիստոնեայ մեծ պետութիւնք զէնու ոյժով են ազատել ճնշուած քրիստոնեայ համայքներին, իսկ 1894 թուի վերջին օրերում նոյն իսկ ինքը տաճիկ կառավարութիւնը ի լուր աշխարհի յայտարարեց, թէ անհրաժեշտ է համարում իւր քրիստոնեայ հպատակների վիճակը բարւոքել։ Սա քրիստոնէութեան և եւրոպական քրիստոնեայ պետութեանց ամենամեծ յաղթանակներից մէկն է, որ սկսուեց 1894 թուականին և այդ ազազան ամենագեղեցիկ ժառանգութիւն է, որ անցեալ տարին կը թողնի ներկայ տարուն։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Դեկտեմբերի 30 ից.

ԲՈՒԴԱ-ՊԷՍՏ. — Կոմս Կուն յայտնեց կայսեր որ չէ կարող ձեռնարկել նախարարութիւն կազմելու։ Նորից խօսում են Բանֆի նախարարութեան մասին։

ՓՈՐԻԶ. — Պալատում Միլէրանը հարց բարձրացաւ Բիշարի բանտից ազատելու մասին, որ բանտարկուած էր հասարակապետութեան նախագահի պատիւը մամուլի մէջ վիրաւորելուն համար և նորերս ընտրուած էր պատգամաւոր։ Դիւպլուին խնդրեց մերժել այդ առաջարկութիւնը, որովհետև նրա կարծիքով այդ ազատութիւնը կը խախտէր օրէնքի առաջ հաւասարութեան սկզբունքները։

Յետոյ Դիւպլուին առաջարկեց հաւատարմութեան խնդիրը (Ծոփոպոլոնները)։ Միլէրանի առաջարկութիւնը մերժուեց 309 ձայնով ընդդէմ 218-ի։

ԻՍԿՕՀԱՄ. — Ճապոնական լրագրները հաղորդում են իբր թէ Կորէայի թագաւորն սպանուած է. ուրիշ տեղեկութիւններին նայելով, թագաւորը կաթուածահար է եղել։ Կորէայի ներքին փոխառութիւն անելու փորձը չյաջողուեց։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԴԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Նուկկա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սինիլիսի և վներական հիւանդութիւնների։

Ե. Մ. ՀԻՆԴԼԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½, ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունում են և ՆԻԶԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ
ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց № 14

Բացի դեղերից գործադրվում են նաև գանազան տեսակ ՋՐՕԹԵՐԱՊԻԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐՕԹԵՐԱՊԻԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը } կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին յետ երեկոյեան } տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասնաժանող կին և մասնաժիստ պարոն։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Ակերոնդ — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. Ղէպէ—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլուչէնց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Ս. Ն. Լեվին—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մէլոտեան—ներքին և վներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.)

Ա. Գ. Մուրզայէ—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից։

Կին-բժ. Մ. Ա. Խաչէնց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կասատեան — ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. Մուսաբեկեանց—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ա. Թաղմազ—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեբեղանէ—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սարգսեան—ներքին, մէզի անդ. և վներական, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. Զիլոց—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Աստղ. Հոյ Ա. Օ. Ագբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. ծակի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

(Կախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչէնց—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐԲԵՐԻՆԻ ԲԱԺԱՆՄԱՆՆԵՐ

(Բանիա վօրօտա, տ. Էնֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Առաքելեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչէնց—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծանօթութիւն.—Աղքատ անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 9 և 50 րոպ.-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 6 և 50 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 6 ժամին 50 րոպ. երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին 25 րոպ. երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 6-ին և 40 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8 ժամին 26 րոպէին երեկոյեան։

ԱՆԴԻԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթում առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԹԱՏՐՈՆ“
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ
ՀԱՆԴԷՍ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
ԲԱՑՈՒԱԾ է **1895** ԹՈՒԱԿԱՆԻ
Բովանդակութիւնը։

Տարեկան բաժանորդագրին է **3** ռ., օտարաքաղաքացիների համար **3** ռ. **30** կ., արտասահմ. **10** ֆր.

Թիֆլիզում բաժանորդագրութիւնն ընդունվում է հրատարակչի մօտ՝ Ստարո Ինստիտուտ. փողոց, № 4.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն. Тифлисъ, Александру Тарханьянцъ կամ Tiflis, Alexandre Tarkhanian.

Հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ։
3—2

ԴՐԱՍԵՆԵԱԿԻ ԵՒ ՊԱՏԵՍՏԻ ՀԵՐԱԽՕՍ № 77 ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀԵՐԱԽՕՍ № 64

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԹՖԼԻԶՈՒՄ եւ ԲԱԳԻՈՒՄ
ՏՕՆԱԾԱՌԻ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ

Ստացուած է մեծ ընտրութեամբ բազմաթիւ շքեղ զարդարանքներ տօնածառի համար. նոյնպէս այրուող թելեր, պաուֆիկի մոմեր, տեսակ-տեսակ մոմակալներ, գոյնզգոյն լապտերներ ու ճայթուկներ։ Սենեկի գոյնզգոյն էլեկտրական լամպեր ու մոմեր. օդեկալոն, օծանելի իւղ (պօմատա), սապոններ, անուշահոտ իւղեր՝ կշռով և գեղեցիկ, տեսակ-տեսակ արուակներով, արտասահմանեան և ռուսական առևտրական տներից մեծ քանակութեամբ և ընտրութեամբ։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ, Տփխիսում, վաճառւում են հետևեալ գրքերը. ռ. կ.

Այվազեան Բ. Աշոտ երկաթ, պատմական վէպ մ. առաջ. և երկ. գ. 1 50
Գրիգորեանց Հանրէս, «Հորիզոն». . . . . գ. 1 —
Ճաղարբէգեան Յ. Վահան Մամիկոնեան. . . . . գ. — 40
Քահանէան, Խուլ Խաչիկ, պատմական վէպիկ. . . . . գ. — 25
Աչէր Այօ, Քուրդի լեռան. . . . . գ. — 25
Թարգոն վեցամեայ հանդ. հր. Ա. Թարխանեանի, իւրաք. հ. . գ. 2 —
Աշանեան, պատի օրացոյց 1895 թ. . . . . գ. — 60

Նոյն տեղը պատրաստուած են շքեղ կազմերով նոր տարուայ և ծննդեան տօներին պարգևելու համար մեր նշանաւոր հեղինակների և թարգմանիչների աշխատութիւնները, Ռուսաց նշանաւոր հեղինակների և եւրոպական հեղինակների ռուսերէն թարգմանութիւնները, մանկական պատկերազարդ շքեղ կազմերով՝ գրքեր, տետրակներ և օրացոյցներ 1895 թ. համար։ 3-2

ԱՆԽԱՐԴԱԽ ՍՈՒՐՃ
(ԿՕՖԷ)

Պատիւ ունիմ յայտնելու արգոյ հասարակութեան, որ Գոլովինսկիյ Պրոսպէկտի վրայ, Բէյտերի տանը (Կրուժօկի դիմաց), նոր բացուած խանութումս Անգլիայից ստացած նոր ՋԵՒԻ ՄԵՐԵՆԱՅՈՎ պատրաստում եմ ԹԱՐՄ և ԱՆԽԱՐԴԱԽ **ՍՈՒՐՃ** բոված, աղցած և այլն յաճախորդների ներկայութեամբ անդամ աղալ երկու բոպէում։

Հրաւիրում եմ առանձնապէս արգոյ յաճախորդների ուշադրութիւնը՝ համեմատութեան առնելու խմիչքը այլ և այլ խառնուրդներով պատրաստուած ֆէղծ սրճի հետ։

(4—3) Մ. Յ. Գասպարեան։

ԼՈՅՍ ՏԵՍՔԻ
ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՅՑԸ
1895 թ.
ՀՍՐՈՒՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հատը 60 կ. ճանապարհի ծախքով՝ 75 կոպէկ։

Մինչև 50 օրինակ գնողին 15% զեղչ
» 100 » » 20 »
» 200 » » 25 »
» 300 և աւելի » 30 »

ճանապարհի ծախքը գնողի վերայ է։

ԲԱՑՈՒԱԾ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Դ. և Ե. գրքերի համար. բաժանորդագրին է 3 ռ.։
Գլխաւոր Հրատ. Աշանեան։

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ՝—

		Ռ.	Կ.
1.	Ջէրէ, Ֆրանկլին, 2 տիպ. սպառուած	—	—
2.	» Վարշինգտոն, 2 տիպ »	—	—
3.	» Հոմերի Իլիականը, պատկերներով	1	—
4.	» Հոմերի Ոդիսականը, »	1	20
5.	» Ռէյնեկէ աղուէսը,	—	60
6.	Սմայլս, Բնաւորութիւն	1	50
7.	» Ինքնօգնութիւն	1	50
8.	Անէյա, Սիրա	1	—
9.	» Ապէնիններից մինչև Անդէսը	—	20
10.	» Ռուստեմ և Զոհրաբ	—	20
11.	Զիլլէր, Աւազակներ, ողբերգութիւն	—	50
12.	Տէլոյց, Ռոբինզոն, փոքրերի համար	—	20
13.	» Կոլումբ, » »	—	15
14	Հայնէ, Բէաթրիչէ, վէպիկ	—	30
15.	» Նօնցայի բերդը, վէպիկ	—	30
16.	Վալտնէր, Հաւատարիմ Սավիտրին *)	—	10
17.	Իբէնոֆ, Մահմեդի կեանքը	1	20

ՇՈՒՏՈՎ ԿԸ ՏՊՈՒԻ՝

2. Դիքէնս, Դաւիթ Կոպպէրֆիլդ, երեք հատոր, անգլիերէնից։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում։

*) Տպագր. հրատարակչ. Ընկեր.

ԲԱՆՈՒՈՐՆԵՐ

Ամուսնացած, աշխատանքի ընդունակ զաւակներով, կարող են լաւ վարձ և յարատև պարապմունք գտնել ԵՂԲ. ԳՕԼԴԼԻՒՍՏՆԵՐԻ Լուցկիների գործարանում։ Դիմել գործարանը, Վերայի ետևից Դիդուբէի հանդէպ, պ. կառավարչին։ (30—30)